ազգին նախ գրեցին առ նա երթալ յԵրուսաղէմ, և յետոյ ազգ արարին նմա մնալ 'ի տեղի իւր ուր և է, և մի երթալ յԵրուսաղէմ, և նա առաքեաց 'ի ձեռն հաւատարմի ղթղթեանս, զՀրովարտակս վասն խարաճի և վասն աքսորանաց Եղիա Եպիսկոպոսի, եւ ինքն արգելաւ անդ վասն ապստամբութեան Ցունաց և խռովութեան աշխարհի, և ապասէր հրամանի Պատրիարքին, եւ յետ առաքելոյ ընդայլ թղթեանս և զպատճէնս գրոց Ամիրայից, ասէ՝ 'ի ժամանել գրոց ըստ պատշաճին տնօրինել, զի անդուսպ եւ խարդախ ապստամբքն լուիցեն, իմացին և ծանիցեն թէ մարդիկ են յաշխարհի · սաստեա միոյն, զի այլքն երկիցեն, և ոչ ոք կարէ կալ հակառակ յԱստուծոյ պարգեւեալ իշխանութեանդ ։

Գաբրիէլ Պատրիարք գրեաց կոնդակ յորդորական բանիւ առ ժողովուրդս Եգիպտոսի, եւ առաքեաց 'ի ձեռն Ցակոբ վարդապետի, յորում պատուիրէր հայրական խրատիւք հնազանդիլ առաջնորդի իւրեանց Սահակ վարդապետի իբրեւ իւրոյ փոխանորդի, և յանձն առնել նմա զհասոյթս եկեղեցւոյ եւ զայլ իրաւունս առաջնորդի · եւ տալ առատ նուէրս և ողորմութիւնս Ցակոբ վարդապետին իբրեւ օգնութիւն 'ի նեղութեան Աթոռոյն, չպահել առ իւրեանս զպանդուխտ քահանայս, զի զբովանդակ հոգեւոր պէտս նոցին խոստանայր լնուլ յԱթոռոյն, (1821 · յ8 Նոյեմբերի) ։

Տեսեալ Լատինաց թէ յետ անցանելոյ երկուց ամաց Հայք ոչ կարացին բերել զՀրովարտակն վասն փակման դրան, բողոք բարձին առ Կուսակալն Տէրվիշ Փաշա, և խնդրէին բանալ զդուռն, և նա գրեաց առ Դատաւորս Երուսաղէմի, ելանել 'ի քննութիւն տեղւոյն, եւ ստուգել զխնդիրն ամենայն պարագայիւք և ծանուցանել ինքեան, որ և արարին իսկ, սակայն չեղեւ անտի օգուտ ինչ Լատինաց ։